կարաց աւարտել, զի Ժ.Գ. ամ թագաւորեաց. և Կատրամիդէս թագուհին կատարեաց 'ի ՆԻԳ թուին: Յաւուրս սորա էր սուրբն Գրիգոր Նարեկացին:

Կոստանդին՝ եղբայր Սմբատայ՝ թագաւորեաց ամս Գ: Յաւուրս սորա եղև արձակումն սատանայի: Նա շինեաց սա վանորայս բազումս 'ի Հայս. Նաև շինեաց զԾառաքար վանքն՝ որպէս ամրոց բերդի. շինեաց և զսուրբն Գրիգոր 'ի Անի, և զԲագնայրն և զԽոցկունս կոչեցեալ վանքն սուրբ Յովհաննէս և սուրբ Ստեփաննոս: Սա ոչ ունէր որդի, այլ դուստր մի. զոր ետ 'ի կնութիւն Ռոմանոսի: Սա Կոստանդին իբրև թագաւորեաց, քակեաց զմահապարտից տունն, զոր շինեալ էր Սմբատայ եղբայրըն իւր. քանզի կոչէր զո և կամէր յիշխանացն, և 'ի տունն այն անտես յումեքէ կախէր յերկաթի ճանկոյ զգեստիւքն իւրովք. զոր ոչ գիտէին՝ թէ ի՞նչ եղև այրն այն՝ մինչև 'ի մահն Սմբատայ, և ապա գիտացին:

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան